ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2017 թվականի ապրիլի 13-ի N 2- Լ

Լսելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում պրակտիկայի ընթացքի մասին պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանի հաղորդումը՝

Գիտական խորհուրդը որոշում է՝

1. Պրակտիկայի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. **Հանձնարարել**.

ա) ֆակուլտետների դեկաններին՝ մինչև սույն թվականի մայիսի 15-ը ներկայացնել գործողությունների ծրագիր՝ իրենց ֆակուլտետներին վերապահված մասնագիտությունների մասնագիտական պրակտիկաները համալսարանի միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ իրականացնելու վերաբերյալ:

բ) Ֆինանսների պլանավորման և վիճակագրության վարչությանը՝ մինչև սույն թվականի մայիսի 20-ը ներկայացված ծրագրերի հիման վրա կազմել ուսումնական պրակտիկաների՝ համալսարանի միջազգային գործընկեր կազմակերպություններում իրականացնելու ծախսերի նախահաշիվ:

գ). ուսումնական գործընթացների կառավարման վարչության պետ Սվետլանա Հովակիմյանին, միջազգային համագործակցության բաժնի պետ Քրիստինա Ծատուրյանին և պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանին՝ մինչև սույն թվականի հունիսի 1-ը ամփոփել ֆակուլտետների կողմից ներկայացված ծրագրերը և ներկայացնել համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը:

դ) մասնագիտական պրակտիկաները կազմակերպող ամբիոնների վարիչներին՝ 2017-2018 ուս.տարում պրակտիկաների ղեկավարումը հանձնարարել համապատասխան փորձառություն ունեցող մասնագետներին, պրակտիկայի համար նախատեսվող ժամաքանակի բաշխման ժամանակ հաշվի առնել տվյալ մասնագետի՝ նույն ժամանակահատվածում տեսական դասընթացներով ծանրաբեռնվածությունը, և ապահովել պրակտիկայի կազմակերպման որակի նկատմամբ պատշաճ հսկողություն,

ե) համալսարանի էլեկտրոնային կրթության բաժնին և պրակտիկայի կենտրոնին՝ ապահովել 2017-2018 ուս.տարում պրակտիկայի առցանց դասընթացների մշտադիտարկման ցուցիչների գործարկումը և առցանց դասընթացների տեխնիկական բնութագրերի համապատասխանեցումը պրակտիկայի կազմակերպման նոր պահանջներին:

Գիտխորհրդի նախագահ՝ Ռուբեն Միրզախանյան